Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 24-ի N 1105 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված կարգի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների հիմնավորումները՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գերակա խնդիրների հիմնավորումները՝ համաձայն N 4 հավելվածի: